



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«06» հունիսի 2014 թ.

N 23-Ն/1

**ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԾԵՐԵՐԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ  
ԽՆԱՄՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 18-ի N 135-Ա/1 հրամանի 1-ին կետի 4)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել տնային պայմաններում և սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում ծերերին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետին, տնային պայմաններում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնների տնօրեններին՝ ղեկավարվել սույն հրամանով հաստատված կարգի պահանջներով:

3. Սույն հրամանի կատարման պարտականությունը վերապահել նախարարի տեղակալ Զ. Բաղդասարյանին:



Ա Ա Ս Տ Ր Յ Ա Ն

## ԿԱՐԳ

### ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԾԵՐԵՐԻՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՏՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են ծեր և հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացի) տնային պայմաններում և սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում, խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Տնային պայմաններում քաղաքացուն տրամադրվում է.

- 1) կենցաղային սպասարկման.
- 2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման.
- 3) սոցիալ- հոգեբանական օգնության.
- 4) իրավաբանական խորհրդատվության ծառայություններ:

3. Տնային պայմաններում խնամքը և սոցիալական ծառայությունները տրամադրվում են դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 65 տարին լրացած միայնակ քաղաքացիներին (այսուհետ՝ տարեց), հաշմանդամություն ունեցող միայնակ անձանց և միայն նշված անձանցից կազմված ընտանիքներին:

4. Տնային պայմաններում խնամքը և սոցիալական ծառայությունները տրամադրվում են տնային պայմաններում՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) մասնագետների կողմից՝ ցերեկային ժամերին (ժամը 10<sup>00</sup>- 18<sup>00</sup>-ն ընկած ժամանակահատվածում) քաղաքացու տանը (ինչպես նաև՝ կազմակերպության իրավասության շրջանակում՝ տանից դուրս)՝ նրա անհատական կարիքներին համարժեք անհատական սոցիալական ծրագրին համապատասխան:

5. Սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնները (այսուհետ՝ կենտրոն), ըստ իրենց ստեղծման նպատակի, խնամք և սոցիալական ծառայություններ ստացող անձանց խմբի և տարիքային կազմի, կարող են ունենալ տարբեր ուղղվածություն՝ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով անձանց խնամք և սոցիալական ծառայություններ տրամադրելու համար՝ ելնելով վերջիններիս առանձնահատուկ կարիքներից և կենտրոնների կանոնադրական խնդիրներից:

6. Կենտրոնում քաղաքացիներին տրամադրվում են հետևյալ սոցիալական ծառայությունները.

- 1) սնունդ՝ օրական մեկ անգամ.
- 2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) իրավաբանական խորհրդատվություն:

7. Տնային պայմաններում և կենտրոններում քաղաքացիներին խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրումն իրականացվում է բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային մարմնի կամ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի (այսուհետ՝ տարածքային կենտրոն) որոշման հիման վրա:

8. Տնային պայմաններում և կենտրոններում քաղաքացիներին սոցիալական ծառայությունները տրամադրվում են տարածքային կենտրոնի սոցիալական աշխատողի (դեպք վարողի) կազմած՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած սոցիալական դեպքի վարման հրահանգով սահմանված անհատական սոցիալական ծրագրի հիման վրա:

9. Կազմակերպությունները և կենտրոնները քաղաքացիներին խնամք և սոցիալական ծառայություններ տրամադրելիս ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 30-ի N730-Ն որոշմամբ, սույն հրամանով և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 163-Ա/1 հրամանով:

## **II. Սոցիալական ծառայությունների տրամադրումը տնային պայմաններում և սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում**

10. Կազմակերպությունում մասնագետներն իրականացնում են իրենց պաշտոնների անձնագրերով սահմանված գործառույթները գործելով իրենց իրավասությունների շրջանակում.

1) սոցիալական աշխատողն իր աշխատանքի ընթացքում ղեկավարվում է սոցիալական աշխատանքի սկզբունքներով, կիրառում է սոցիալական աշխատանքի մեթոդները, կազմակերպում տնային պայմաններում խնամք և սոցիալական ծառայությունների ստացող քաղաքացիների (այսուհետ՝ հաճախորդ) անհատական սոցիալական ծրագրով նախատեսված այլ սոցիալական ծառայությունների տրամադրումը.

2) սոցիալական սպասարկողը՝

ա. հաճախորդին տանը մատուցում է կենցաղային սպասարկման ծառայություններ՝ հաճախորդի կենսագործունեության սահմանափակման աստիճանին համապատասխան,

բ. կատարում է հաճախորդին անհրաժեշտ մթերքի և դեղորայքի գնումներ, վճարում է կոմունալ վարձավճարները, անհրաժեշտության դեպքում՝ հաճախորդի փաստաթղթերը ներկայացնում համապատասխան կառույցներ, հաճախորդին ուղեկցում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ (այսուհետ՝ բուժօգնություն), զբոսանքի և այլն,

գ. հաճախորդին մատուցում է անձնական հիգիենայի և անհրաժեշտ խնամքի ծառայություններ այն դեպքում, երբ հաճախորդն ունի ինքնասպասարկման ունակությունների սահմանափակում (մշտական կամ ժամանակավորապես) և ի վիճակի չէ ինքնուրույնաբար հոգալ իր կարիքները:

3) խմբավարը համակարգում և կազմակերպում է 6-8 սոցիալական սպասարկողների աշխատանքը:

4) հոգեբանը տրամադրում է հոգեբանական հատուկ մասնագիտական ծառայություն՝ անհատական և խմբային թերապիայի, գրույցների, խորհրդատվության և մասնագիտական այլ գործիքների ու մեթոդների միջոցով:

11. Իրավաբանական խորհրդատվության ծառայությունները հաճախորդներին տրամադրվում են կազմակերպության իրավախորհրդատուի կողմից, համաձայն կազմակերպության ղեկավարի սահմանած ժամանակացույցի կամ՝ ըստ անհրաժեշտության:

12. Իրավախորհրդատուն հաճախորդներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն, կազմակերպում հանդիպումներ, քննարկումներ իրավական թեմաներով, ինչպես նաև պարզաբանումներ տալիս հաճախորդներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

13. Հաճախորդների դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ, իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպության իրավախորհրդատուն աջակցում է հաճախորդին դիմումներ, հայցադիմումներ գրելու և ներկայացնելու գործում, մասնակցում է նրանց առնչվող դատական նիստերին:

14. Կենտրոնում հաճախորդների համար, բացի սույն կարգի 6-րդ կետում նախատեսված հիմնական սոցիալական ծառայությունները, կազմակերպվում են նաև տարբեր խմբակներ, ուսուցումներ, հանդիպումներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ և այլն (այսուհետ՝ ժամանցային միջոցառումներ):

15. Ժամանցային միջոցառումները կազմակերպվում են կենտրոնի և կազմակերպության մասնագետների կողմից:

16. Կենտրոնում հաճախորդներին տրամադրվում է սնունդ օրը մեկ անգամ՝ չոր մթերաբաժնի կամ տաք կերակրի ձևով:

17. Կենտրոնի կամ կազմակերպության սոցիալական աշխատողը, հաճախորդի ինքնասպասարկման ունակությունների արտահայտված սահմանափակումների դեպքում, կազմակերպում է տաք կերակուրը կամ չոր մթերաբաժինը կամ ստացած այլ մարդասիրական օգնությունը՝ հաճախորդի տուն տեղափոխելու գործընթացը:

18. Սոցիալ-հոգեբանական օգնությունը մատուցվում է հաճախորդների սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավման, նրանց սոցիալական հմտությունների զարգացման, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման և սոցիալական կապերի զարգացման նպատակով, նպաստելով հաճախորդի ինքնորոշման իրավունքի իրացմանը:

19. Կենտրոնի կամ կազմակերպության սոցիալական աշխատողն օգնում է հաճախորդին հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը, կատարելագործելու առկա սոցիալական ունակությունները, հմտությունները և ձեռք բերելու նորերը, ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող հաճախորդների սոցիալական պաշտպանության իրավունքի իրացման պահանջների կատարումը և պահպանում է սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը:

20. Կենտրոնի կամ կազմակերպության սոցիալական աշխատողը աշխատանքներ է իրականացնում բարձրացնելու հանրության իրազեկությունը

տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների վերաբերյալ և համագործակցում պետական և հասարակական տարբեր կազմակերպությունների հետ:

### **III. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը**

21. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները հաճախորդներին տրամադրվում են ինչպես կենտրոններում, այնպես էլ տնային պայմաններում՝ հաճախորդի տանը:

22. Կազմակերպության կամ կենտրոնի բժիշկները կատարում են հաճախորդների պլանային ընդունելություններ համապատասխանաբար՝ կենտրոններում և այցեր՝ տնային պայմաններում սպասարկվող հաճախորդների տներ՝ պլանային կամ կանչի դեպքում:

23. Հաճախորդների ընդունելությունների և տնային այցելությունների ժամանակ բժիշկը՝

- 1) կատարում է զննում, հիվանդության ախտորոշում, բուժման նշանակում
- 2) տրամադրում է խորհրդատվություն, հիվանդությունների կանխարգելման և առողջ ապրելակերպի մասին տեղեկատվության տրամադրում
- 3) տրամադրում է առաջին բուժօգնության
- 4) ըստ անհրաժեշտության՝ հաճախորդին ուղղորդում է բուժհաստատություն, աջակցում նրան օգտվելու այդ հաստատությունների կողմից տրամադրվող ծառայություններից և հետևում այդ գործընթացին:

24. Հաճախորդի ցանկությամբ բժիշկը կարող է դիտորդի կարգավիճակով մասնակցել հաճախորդի բժշկասոցիալական փորձաքննությանը:

25. Կազմակերպության կամ կենտրոնի բուժքույրը կատարում է պլանային կամ բժշկի ցուցումով ընդունելություններ համապատասխանաբար՝ կենտրոններում և այցելում հաճախորդների տներ, ինչպես նաև արտահերթ տնային այցելություններ՝ ներկայացված կանչի հիման վրա:

26. Կազմակերպության կամ կենտրոնի բուժքույրը հաճախորդին՝

- 1) տրամադրում է առաջին բուժօգնություն
- 2) տրամադրում է բժշկի կողմից նշանակված դեղորայք, կատարում բժշկի այլ ցուցումներ՝ վիրակապություն, ներարկումներ և այլն
- 3) ստուգում է հաճախորդի տանն առկա դեղորայքի ժամկետը, հսկում հաճախորդի կողմից բժշկի ցուցումների ճշգրիտ կատարմանը
- 4) իրականացնում է բնակարանի սանիտարական վիճակի և հաճախորդի անձնական հիգիենայի վերահսկում:

27. Կենտրոնի բուժքույրը կատարում է նաև կենտրոնի տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի, անձնակազմի և հաճախորդների անձնական հիգիենայի վերահսկում:

### **IV. Հաճախորդներին սոցիալական ծառայությունների տրամադրման դադարեցման հիմքերը**

28. Սոցիալական ծառայությունների տրամադրման դադարեցման հիմքերն են.

1) հաճախորդի գրավոր դիմումը.

2) հաճախորդի կողմից ոչ հավաստի տվյալներ ներկայացնելը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշմամբ հաստատված ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում՝ մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա.

4) կենտրոնի հաճախորդի կողմից կենտրոնի ներքին կարգապահական կանոնները երեք և ավելի անգամ խախտելը.

5) հաճախորդի մահվան դեպքում.

29. Սոցիալական ծառայությունների տրամադրման ժամանակավոր դադարեցման հիմքերն են.

1) բնակության վայրից երեք ամիս և ավելի ժամկետով անընդմեջ հաճախորդի բացակայությունը.

2) հաճախորդի բնակության վայրում երեք ամիս և ավելի ժամկետով անընդմեջ հյուրընկալվող անձանց առկայությունը: